# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

«ՇՀԱՊՁԲ-15/1- *ՇՄԱՓԿ-17/1*» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Երևան «22» «Դեկտեմբեր 2016 թ.

ժամը 11 $^{30}$

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝

| | |
|---|---|
| Վ. Սահակյան | « Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն |

Հանձնաժողովի անդամներ՝

| | |
|---|---|
| Ս.Փահլևանյան | « Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն |
| Հ.Խաչատրյան | « Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխ. հաշվապահ |
| Ա. Վարդանյան | « Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի օգնական |

Հանձնաժողովի քարտուղար՝

| | |
|---|---|
| Ռ.Կարապետյան | Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի հաշվապահ |

«ՇՀԱՊՁԲ-15/1- *ՇՄԱՓԿ-17/1*» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման, գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի գնային առաջարկների արդյունքների ամփոփման) մասին.
Գնային առաջարկներ պարունակող ծրարը բացվել է ՀՀ բնապահպանության նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ում,Կոմիտաս 29,3-րդ հարկ,

<u>Գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները</u>

| Մասնակիցների անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|
| «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ | ք. Երևան, Պուշկինի 1 հեռ. 010-54-09-11 |

<u>Ուրիշ գնային առաջարկներ չեն ներկայացրել</u>

<u>Տվյալներ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջների համապատասխանության մասին.</u>
Մասնակցի կողմից ներկայացված ծրարը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

<u>Տվյալներ բացված յուրաքանչյուր առաջարկում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.</u>

«ՇՀԱՊՁԲ-15/1- *ՇՄԱՓԿ-17/1*» ծածկագրով մրցույթի գնային առաջարկների ներկայացման հրավերով սահմանված «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորեյշն» ՍՊԸ –ն փակ կնքված ծրարով ներկայացրել է՝ դիմում շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու, հայտարարություն մասնագիտական փորձառության մասին, հայտարարություն տեխնիկական միջոցների մասին, հայտարարություն ֆինանսական միջոցների մասին, հայտարարություն աշխատանքային ռեսուրսների մասին, գնային առաջարկ, ինքնարժեքի հաշվարկ, հայտարարություն առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ: Փաստաթղթերը կազմված են բնօրինակից և 2 օրինակ պատճեններից, բնօրինակ փաթեթում ներառված բոլոր պատճեններ հանդիսացող փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակցի կողմից:

<u>Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.</u>

Մրցույթին մասնակցության հայտ ներկայացրած մասնակցի կողմից մրցույթի գնային առաջարկների ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Մասնակիցների առաջարկած գները՝

(ՀՀ դրամներով)

Մասնակիցների կողմից մրցույթի գնային առաջարկների ինքնարժեքների հաշվարկներում թվաբանական անճշտություններ չկան:

| N ը/կ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | | «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորէյշն» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 5 | |
| | | | ԱԱՀ-ով | Առանց ԱԱՀ |
| 1 | Բենզին ռեգուլյար | լիտր | 1440000 | 1200000 |

2.1 «ՍԻՓԻԷՍ օիլ Քորփորէյշն» ՍՊԸ -ի մասով ներկայացնել հարցում ՀՀ ֆինանսների նախարարություն ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերով սահմանված «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

2.2 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 2.1 կետով հարցման ստացման հաջորդող օրը ժամը 11:00-ին՝ ՀՀ բնապահպանության նախարարության <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ, ք. Երևան,Կոմիտաս 29 հասցեով:

Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անունները ու ազգանունները:

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Սահակյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Փահլևանյան

Հ.Խաչատրյան

Ա. Վարդանյան

Քարտուղար Ռ.Կարապետյան